

**ՀԱՄԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**  
**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ**  
**ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Արգական համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Նորիկ Մովսեսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 12.12.2016թ. N 58-Ն որոշմամբ

Գ.ԱՐԶԱԿԱՆ

2016թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՁՈՒՅՆ ԻԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆ ԽՈՍՔԸ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրով ներկայացվում է զարգացման տեսլականը առաջիկա տարիների համար: Զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար համայնքի զարգացման հիմնական փաստաթուղթն է: Այն պայմանավորված է համայնքի մարդկային, ֆինանսական, տեխնիկական հնարավորություններով, ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ:

Ընդհանրապես բնակչության բարեկեցության հիմնական նախադրյալը նրանց ներգրվածությունն է արտադրության և սպասարման ոլորտներում: Արզական համայնքը գյուղական համայնք է: հետևաբար գերակա է գյուղատնտեսության զարգացումը: Հնգամյա ծրագրով նախատեսվում է մշակվող հողատարածքների ընդլայնում, որը հիմնականում պայմանավորված է ոռոգման ջրի անկատար համակարգով: Ծրագրով նախատեսվում է ոռոգման համակարգի արդիականացում և նոր ջրագծի կառուցում մայր ջրատարից, որը կապահովի անխափան ջրամատակարարում և գյուղատնտեսական մթերքների արտադրության բարձրացում: Առանց վերամշակման գյուղատնտեսության աճը հնարավոր չէ պատկերացնել: Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի միջոցների մասնակի ներդրմամբ և արտաքին ներդրողների ներգրավմամբ համայնքում հիմնել գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ձեռնարկություններ:

Առանց սոցիալական և մշակութային խնդիրների լուծման հնարավոր չէ պատկերացնել քիչ թե շատ զարգացած համայնք: Զարգացման ծրագրում ներառված են հետևյալ միջոցառումները՝ միտված սոցիալական ոլորտի բարելավմանը, համայնքի լուսավորության ցանցի ընդլայնում, համայնքի մարզադաշտի /սպորտհրապարակի/ կառուցում, հանդիսությունների սրահի հիմնանորոգում, ի նաև ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում:

Առանց հոգևոր դաստիարակության և հավատքի անհնար է պատկերացնել առողջ և ապագայի նկատմամբ հավատով լեցուն հասարակություն և նոր սերունդ: Հնգամյա ծրագրով նախատեսվում է շուրջ հարյուր տարի չգործող բնակավայրի

ներսում գտնվող Սուրբ Թադևոս եկեղեցու հիմնանորոգում, այսինքն փաստացի նորի կառուցում և գործարկում: Այս ծրագրի իրականացման համար համայնքի միջոցները բավարար չեն, անհրաժեշտ է ներգրավել արտաբյուջետային միջոցներ: Նախորդ տարիներին նախնական աշխատանքներ իրականացվել են այդ միջոցների հայթաթման համար:

Ներկա պահին համայնքի զարգացմանը խոչնդոտում են և մեր համայնքի թույլ կողմերն են՝ անկատար ոռոգման համակարգը, կոյուղու միասնական համակարգի բացակայությունը, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրության բացակայությունը, տրանսպորտային ոչ բավարար սպասարկումը, խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածությունը և տուրիզմի սպասարկման ենթակառուցվածքների բացակայությունը:

Հնարավորինս համայնքի զարգացման թվարկված խոչնդոտների վերացմանն են ուղղված զարգացման ծրագրում ներառված հիմնական ծրագրերը և ուղղությունները: Մեր պատկերացմամբ նախատեսված զարգացման ուղղությունները համահունչ են մարզի զարգացման միտումներին և ուղղություններին:

Ընդհանուր առմամբ սա է համայնքի զարգացման մեր տեսլականը:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրազդան գետի ձախ ավիին, Ծաղկունյաց լեռների հարավային ստորոտին՝ նրա լեռնալանջերի ու հարավ ձորակների զուգորդության մեջ է ամփոփված Արզական համայնքը: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիների արմատները տանում են դեպի Մակու, Մուշ, Խոյ և Բայազետ գավառները: Նրանք այստեղ են եկել վերաբնակության դեռևս 1828-30թթ.:

Այսօրվա Արզականի պատմությունը սկսվել է 1828-30թթ., սակայն հիշողությունը նրա որպես բնակատեղի տանում են վաղեմի օրերը, երբ ամառանոցն էր այն արքայից արքայի: Պատմիչների վկայությամբ Արտավազ 3-րդը շրջագայելով այս գմայելի տեղանքով, հիանում և կառուցում է իր ապարանքը և կոչում Արտավազական, որը հետագայում հնչյունափոխությունների ենթարկվելով վերածվել է Արզական:

Գեղատեսիլ դիրքն ու բնաշխարհը յուրատեսակ հմայք են հաղորդում համայնքին, իսկ զով, սառնաշունչ օդը, անտառային ծածկույթն ու ստորերկրյա բուժիչ ջրերը վաղուց արդեն հայտնի ու ճանաչելի են դարձրել նրան:

Մայրաքաղաքից հեռավորությունը կազմում է 34 կմ: Այն Հրազդան քաղաքից գտնվում է 15 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Չարենցավան քաղաքից՝ 8 կմ դեպի հյուսիս: Արզական համայնքը դասվում է հանրապետության խոշոր գյուղական համայնքերի շարքին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 8462.0 հա, ունի 2910 բնակչություն, տնտեսությունների թիվը՝ 716 է: Համայնքի վարչական տարածքում գտնվում է հազար միավորից ավելի այգեգործական /ամառանոցային/ տնտեսություններ և <<Աղվերանի>> հանգստի գոտին՝ շուրջ քսանհինգ հանգստյան տներով և պանսիոնատներով: Արզականի տարածքում կան մարմարի, օխրայի, խճաքարի, տիտանի հանքավայրեր: Համայնքում կան բազմաթիվ աղբյուրներ, որոնցից մի քանիսը հանքային տաք աղբյուրներ են, ունեն բուժիչ նշանակություն: Արզականի հայտնի <<Տաք ջրերը>>բազում զբոսաշրջիկների ու հյուրերի համար իսկական հրաշք են:

Համայնքը ունի զարգացման մեծ ներուժ, որը պայմանավորված է նրա աշխարհագրական շահեկան դիրքով, համեմատաբար մեղմ բնակլիմայական պայմաններով, անտառածածկույթի և հանգստյան գոտիների առկայությամբ, որոնք հանդիսանում են համայնքի ուժեղ կողմերը: Համայնքի զարգացման խոչընդոտներ են հանդիսանում

անկատար ոռոգման համակարգը, գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ արդյունավետ շակումը, ինչպես նաև ոչ ժամանակակից՝ ավանդական մեթոդներով անասնապահությամբ բզբաղվելը:

Արգական համայնքի բնակչությունը 2016 թ. Դրությամբ կազմում է 2910 մարդ (աղյուսակ1):

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (2016 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	<b>2910</b>
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	<b>716</b>
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	-
2.2	Կիսակառույց տներում բնակվող	<b>2</b>
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	<b>57</b>

Համայնքի բնակչության 57% կազմում են տղամարդիկ և 43% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (2016 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	<b>2910</b>
	մինչև 1 տարեկան	39
	1-2 տարեկան	86
	3-4 տարեկան	100

	5-6 տարեկան	79
	7-10 տարեկան	235
	11-14 տարեկան	143
	15-17 տարեկան	128
	18 և ավելի տարեկան	2200
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	315
	Տարիքային և աշխատանքային	<b>282</b>
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	<b>7</b>
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	-
5.	Հաշմանդամ երեխաներ	<b>4</b>
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	<b>3</b>
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	<b>11</b>
9.	Հաշմանդամներ	<b>79</b>
10.	Զբաղվածներ	<b>1010</b>
11.	Գործազուրկներ	<b>200</b>
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	<b>76</b>
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	<b>3</b>

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Արզական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 31-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 70200 հազար դրամ, ծախսերի գծով՝ 70227 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 27 հազար դրամ: Արզական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 54-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է 73550.4 հազար դրամ, ծախսերի գծով՝ 73523.4 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 27 հազար դրամ: 2016 թվականի բյուջեի

Եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 59.8 %՝ 44022.2 հազար դրամ:

Համայնքը նախկինում դասվել է ինտենսիվ այգեգործության և հողագործության առաջավոր տնտեսությունների շարքին, սակայն նոր տնտեսավարման հարաբերությունների անցնելիս գրեթե ամբողջությամբ վերացվեց այն: Վերջին տարիներին ավելացան այգեգործությամբ զբաղվող ֆերմերները, որոնց ջանքերի շնորհիվ մշակվում է 30 հաայգի և ինտենսիվ այգիների հիմնման միտումը կտրուկ ավելացել է: Համայնքում առկա է 1200 գլուխ խոշոր եղջերավոր անասունները հիմնականում պատկանում են մանր տնտեսություններին: Համեմատաբար խոշոր երկու տնտեսություններում առկա է շուրջ 150 խոշոր եղջերավոր անասուն: Վերջին տարիներին զարգանում է նաև մեղվաբուծությունը և 42 տնտեսություններում առկա է 750 մեղվաընտանիք: Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները իրացվում է Չարենցավանի, Հրաղդանի և մայրաքաղաքի շուկաներում:

Արգակյան համայնքը հանրապետության հանգստի կազմակերպման խոշորագույն կենտրոններից է: Համայնքի վարչական տարածքում գտնվում են շուրջ քսանհինգ հանգստյան տներ և պանսիոնատներ: Սակայն ցավոք դրանցից ներկա պահին ոչ բոլորն են գործում: Գործող պանսիոնատները հիմնականում վերջին տարիներին հիմնանորոգվել են և համապատասխանում են ժամանակակից պահանջներին: Զգործող պանսիոնատները վերագործարկելու համար պահանջվում է զգալի ֆինանսական ներդրումներ, որոնք ցավոք սեփականատերերի մոտ բացակայում են: Նշված հանգստյան տները վերագործարկելու համար անհրաժեշտ է ներգրավել ներդրումային միջոցներ:

### **Համայնքի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ**

- Արգակյանի միջնակարգ դպրոցում սովորում են 307 աշակերտ: Այն հիմնովին վերանորոգված է, ունի լոկալ ջեռուցման համակարգ:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունը՝ մանկապարտեզ ՀՈԱԿ-ը աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, այն հիմնովին վերանորոգվել է սոց. ներդրումների և համայնքի բյուջեի միջոցների հաշվին, ունի առանձին լոկալ ջեռուցման համակարգ, ապահովված է կոմունալ հարմարություններով, հաճախում են 65 երեխա:



■ Համայնքի մշակույթի տան շենքում գործում է արվեստի դպրոց ՀՈԱԿ-ը: Այն աշխատում է 6 օրյա աշխատանքային տեժիմով: Ջեռուցումը իրականացվում է վառարանների և էլեկտրական սալիկների միջոցով: ՀՈԱԿ-ում գործում են՝ պարի, դաշնամուրի, հարվածային գործիքների, կերպարվեստի, ասեղնագործության քառասուններ, որում սովորում են 101 երեխա: Մշակույթի տունը կառուցման օրվանից չի վերանորոգվել: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին միայն հիմնովին նորոգվել է շինության տանիքը: Շինության վերանորոգման համար պահանջվում է մոտ 65 մլն. դրամ, որը համայնքի բյուջեի միջոցներով անհնար է իրականացնել: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել արտաբյուջետային միջոցներ:

**Աղյուսակ 3. Արգական համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, նախնական մասնագիտական կրթական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ**

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Արգականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	307	43
2.	«Արգականի մանկապարտեզ» ՀՈԱԿ	11	65
3.	«Արգականի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	<b>14</b>	<b>101</b>
4.	«Բուժամբուլատորիա» ՊՈԱԿ	7	

Համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ Բուժամբուլատորիա ՊՈԱԿ, որը իրականացնում է համայնքի բնակիչների բուժ. սպասարկումը, հաշվառվածների թիվը կազմում է 1515: Շենքը նորակառույց է, սակայն ապահովված չէ լոկալ ջեռուցման համակարգով, և ունի արդիական բժշկական սարքերով համալրման կարիք:

### 2.3 Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային,

միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ

2016թ. ապրիլի 8-ի համայնքի ավագանու N 16-Ա որոշմամբ հանձնվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին: 2017-2018թթ. նախատեսվում համայնքի խմելու ջրի արդիականացման ծրագիր, որի իրականացման հմար անհրաժեշտ են խոշոր ներդրումներ: Ծրագրի իրականացման նախագծանախահաշվային աշխատանքները դեռ չեն իրականացվել:

### 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

**Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն  
( եկամտների և ծախսերի կանխատեսումը)**

Եկամտատեսակները	2015թ./ տարեկան պլանը	2017թ. Գանխա տեսվում է	2015թ. տարեկա նի նկատմա մբ %-y	2018թ. Գանխատ եսվում է	2015թ. տարեկ անի նկատմ ամբ %- y	2019թ. Գանխատ եսվում է	2015թ. տարեկանի նկատմամբ %-y	2020թ. Գանխատ եսվում է	2015թ. տարեկ անի նկատմ ամբ %- y	2021թ. Գանխատ եսվում է	2015թ. տարեկ անի նկատմ ամբ %- y
<b>Ընդամենը եկամուտներ</b>	70927.9	147690	208.7	12275.0	158.3	117932.0	166.3	120880.0	170.4	107960.0	152.2
Գույքահարկ անշարժ գույքից	25420.0	33416	124.6	31850.0	125.3	31900.0	125.5	32000.0	125.9	3300.0	13.0
Հողի հարկ	9904.0	12303.6	143.4	14500.0	146.4	14600.0	147.4	14800.0	149.4	16200.0	163.6
Տեղական տուրք	638.6	975	150.1	970.0	151.9	972.0	152.2	980.0	153.5	990.	155.0
Պաշտոնական դրամաշնորհներ	29528.3	28094.4	95.2	28100.0	95.2	28500.0	96.5	29000.0	98.2	40000.0	135.5
Այլ եկամուտներ որից	4153.0	6874	170.3	6855.0	165.1	6960.0	167.6	7100.0	171.0	7470.0	179.9
Գույքի վարձակալության եկամուտներ	1500.0	1360	104.0	1560.0	104.0	1560.0	104.0	1600.0	106.7	1650.0	110.0
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից ծառայությունների մատուցումից	2600.0	3200	123.1	3300.0	126.9	3350.0	128.8	3400.0	130.8	3500.0	134.6
Վարչական զանձումներ	43	360	837.2	45.0	104.7	50.0	116.3	50.0	116.3	60.0	139.5
Մուտքեր տույժերից, տուգանքներից	10	50	500.0	50.0	500.0	50.0	500.0	50.0	500	60.0	600.0
Այլ եկամուտներ	0.0	1904	0.0	1900	0.00	1950.0	0	2000	0	2200	0
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	1284.0	0	0.0	30000.0	2336.4	35000.0	2725.9	37000.0	2881.62	40000.0	3115.3
Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջյա հավելումը	20.7	66023	318951.7	200.0		450.0		150.0		120.0	

<b>Ընդամենըձայսեր</b>	70947.7	147590	208.7	112075.0	158.0	117482	165.6	120730	170.2	107840	152.0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, որից՝	39563.3	38910	99.5	54355.0	137.4	40750	103.0	42300	106.9	33860	85.6
Հասարակական կարգ և անվտանգություն	50.0	100	200.0	300.0	600.0	450	900.0	500	1000.0	500	1000.0
Տնտեսական հարաբերություններ	1284.0	37423	2906.7	8200.0	638.6	36300	2827.1	37000	2881.6	1380	107.5
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	1050.0	32084	3055.6	7428.0	707.4	6882	655.4	3730	355.2	37000	3523.8
Հանգիստ, մշակույթ և կրոն	378.0	960	254.0	6000.0	1587.3	1000	264.6	4500	1190.5	1200	317.5
Շրջակա միջավայրի պաշտպանություն	1858.0	2525	135.9	7538.0	405.7	2800	150.7	3000	161.5	3500	188.4
Կրթություն	24864.4	33889	136.3	26254.0	105.6	27300	109.8	27500	110.6	28000	112.6
Մոցիակական պաշտպանություն	1900.0	1800	94.7	2000.0	105.3	2000	105.3	2200	115.8	2400	126.3

## 2.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

- 1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական դժվարություններն են ազատ ֆինանսական միջոցների բացակայությունը և գործարարների՝ հատկապես սկսնակ բիզնես ծրագրերի իրականացման և գիտելիքների ոչ բավարար մակարդակը:
- 2) Որակյալ արտադրողական կրթություն իրականացնելու համար հիմնական խոչընդոտներից են կրթական հաստատության շենքային պայմանները:
- 3) Համայնքում ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպմանը խոչընդոտում են մշակույթի տան շենքային պայմանները, ինչպես նաև մարզական ենթակառուցվածքների բացակայությունը:
- 4) Համայնքի բյուջեի միջոցները հնարավորություն են տալիս սանիտարական մաքրում և աղբահանություն իրականացնել միայն համայնքի գլխավոր փողոցներին հարակից տարածքներում:
- 5) Համայնքի տարածքով հոսող Դալարիկ գետի էկոլոգիական վիճակը:
- 6) Բնակավայրի ռելիեֆից ելնելով որոշակի հատվածներում առկա է քարաթափման վտանգ: Քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքները համայնքում թույլ են զարգացած:

**2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (Ութշտ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

***ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ***

Համայնքի բնակլիմայական պայմանները և աշխարհագրական դիրքը լայն հնարավորություններ են ստեղծում համայնքի համակողմանի զարգացման համար:

**Համայնքի ուժեղ կողմերն են՝**

- հանգստի գոտու առկայությունը
- Երևան-Սևան մայրուղուց մինչև համայնք տանող ճանապարհի բարվոք վիճակը.
- համայնքի հանքային տաք աղբյուրների առկայությունը.
- համայնքի անտառածածկույթի առկայությունը և ալպիական բառեխառն գոտում գտնվելը.
- այգեգործության և անասնապահության զարգացման համար բարենպաստ պայմանների առկայությունը
- համայնքի ամբողջությամբ գազաֆիկացված լինելը.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ***

**Համայնքի թույլ կողմերն են՝**

- անկատար ոռոգման համակարգը
- կոյուղու միասնական հմակարգի բացակայություն
- գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրության բացակայություն
- տրանսպորտային ոչ բավարար սպասարկում
- խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածություն
- տուրիզմի սպասարկման ենթակառուցվածքների բացակայություն:

***ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

**Համայնքի զարգացման հնարավորություններն են՝**

- ոռոգման կատարյալ համակարգի ներդրումը կնպաստեր գյուղ. մթերքների արտադրության ավելացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը.
- Կոյուղագծի կենտրոնացված /միասնական/ համակարգի ներդրումը կլուծեր սանիտարահիգիենիկ և բնապահպանական խնդիրներ.

- Տուրիզմի սպասարկման ենթակառուցվածքների ներդրումը և զարգացումը կնպաստեր միջազգային տուրիզմի զարգացմանը և աշխատատեղերի խնդրի լուծմանը:

### ***ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ***

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Կոյուղագծի կենտրոնացված համակարգի բացակայությունը նպաստում է սանիտարական վիճակի վատթարացմանը.
- Փակ խողովակաշարի ոռոգման համակարգի բացակայությունը խոչնդոտում է գյուղատնտեսության ինտենսիվ զարգացմանը:
- Գործազրկության մակարդակի աճը

## **3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

### **3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄԼԱԿԱՆ**

Գյուղատնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանները, անտառածածկույթի և հանգստյան գոտու առկայությունը համայնքի ապագա զարգացմանը նպաստող հիմնական գործոններն են:

- Ինտենսիվ այգեգործության վերականգնումը, ագրոտեխնիկական նոր մեթոդների կիրառումը հնարավորություն կտա էապես մեծացնել ֆերմերների նյութական եկամուտները, որը իր հերթին կբերի կենսամակարդակի բարձրացմանը:
- Համայնքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, մասնավորապես անտառածածկույթի առկայությունը լայն հնարավորություններ են ստեղծում համայնքի հետագա զարգացման և նյութական հոսքերի ավելացմանը: Հիմնականում համայնքում առկա հանգստյան տների և պանսիոնատների մատուցված ծառայությունները՝ կապված շենքային պայմաններից և սեփականատերերի նյութական միջոցներից, չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, թույլ են զարգացված ծառայությունների մատուցման և սպասարկման ենթակառուցվածքները, որը իր հերթին խոչնդոտում է տուրիզմի զարգացմանը, որի հետևանքով համայնք լրացուցիչ նյութական միջոցների հոսքերը նվազում են:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության նստցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, այն դարձնել առողջարանային գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- Համայնքի բնակիչների եկամուտների կայուն աճը, որը արտահայտում է աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ, արտահայտված տոկոսով,
- Բնակչության զբաղվածության աճ /ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներ, արտահայտված տոկոսով,

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

Հ / Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Համայնքի բնակիչների եկամուտների կայուն աճը, որը արտահայտում է աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),	18%	16.5%	15%	12%	10%
2	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,	5%	3%	8%	8.8%	5%
3	Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ, արտահայտված տոկոսով,	1%	1.7%	2.3%	4%	7%

4	Բնակչության զբաղվածության աճ/ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներ/, արտահայտված տոկոսով,	5%	3%	7%	5%	9%
---	---	----	----	----	----	----

### 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՍԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Ոռոգման ցանցի արդիականացում և նոր ջրագծի կառուցում
- Գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ձեռնարկությունների հիմնում.
- Համայնքի ցերեկային լուսավորության ցանցի ընդլայնում
- Համայնքի մարզադաշտի կառուցում.
- Բնակավայրի Սուրբ Թադևոս եկեղեցու հիմնանորոգում /կառուցում և գործարկում/.
- Հանդիսությունների սրահի հիմնանորոգում.
- Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>					
1. Համայնքի բնակիչների եկամուտների կայուն աճը, որը արտահայտում է աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքներ հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),	18%	16.5%	15%	12%	10%
2. Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,	5%	3%	8%	8.8%	5%
3. Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ, արտահայտված տոկոսով,	1%	1.7%	2.3%	4%	7%
4. Բնակչության զբաղվածության աճ/ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներ/,	5%	3%	7%	5%	9%

արտահայտված տոկոսով,					
<b>ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ</b>					
1. Ոռոգման ջրագծի անցկացում					
2. Գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ձեռնարկությունների հիմնում.					
3. Համայնքի գերեկային լուսավորության ցանցի ընդլայնում					
4. Համայնքի մարզադաշտի կառուցում.					
5. Բնակավայրի Սուրբ Թադևոս եկեղեցու հիմնանորոգում /կառուցումն գործարկում/.					
6. Հանդիսությունների սրահի Հիմնանորոգում.					
7. Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում					

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:



# Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ

## « Ոռոգման ջրագծի կառուցում » (Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղացիական տնտեսություններին ապահովել ոռոգման ջրով					
Օրագրի անմիջական նպատակ	Պտղահատապտղային այգիների հիմնում 25հա, բանջարանոցային մշակաբույսերի տարածությունների ավելացում` 10հա					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016 30մլն.	2017 30մլն.	2018 -	2019 -	2020 -
Օրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գոյություն ունեցող 10հա պտղատու բերքատու այգիների, բանջարանոցային մշակաբույսերի բերքատվության բարձրացում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016 -	2017 7մլն.	2018 7,3մլն	2019 8մլն	2020 8մլն
	2. Նոր այգիների հիմնում 25հա /պտղատու-20հա, հատապտուղ – 5հա/, բանջարանոցային մշակաբույսերի տարածությունների ավելացում` 10հա					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016 -		2017 -	2018 2մլն,	2019 3մլն,	2020 5մլն,	2021 7մլն,
Օրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.ջրագծի կառուցում 1.2.  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.պտղատու այգիների մշակությամբ զբաղվողների միավորումների ստեղծում 2.2.					
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 5մլն դրամ Կապիտալ ծախսեր` 25մլն դրամ Ընդհանուր բյուջեն` 30մլն դրամ					
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	---					
Օրագրի հիմնական ռիսկերը	--					
Օրագրի հիմնական շահառուները	Գյուղացիական տնտեսությունները թվով 150-ը					
Օրագրի սկիզբ և ավարտ	2017թ.					
Օրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի վարչական տարածքում գտնվող մայր ջրագծից ≈1800մմ խողովակաշարի անցկացում					

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ն 2

### « Գյուղատնտեսական մթերքների վերամշակում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նոր աշխատատեղերի ստեղծում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում արտադրվող գյուղատնտեսական մթերքների մթերում և վերամշակում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		60մլն.	--	10մլն	20մլն	30մլն	--
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Մոտ 20-30 նոր աշխատատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	--	--	--	--	--
	2. Համայնքում արտադրվող գյուղատնտեսական մթերքների լիարժեք իրացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
-		-	--	--	--	--	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.ձեռնարկության հիմնում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 15մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 45մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հողատարածքի հատկացում, արտաբյուջետային միջոցների ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Միջոցների բացակայում						
Ծրագրի հիմնական շահառուները	Գյուղացիական տնտեսություններ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2020թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի աջակցում՝ արտաքին ներդրողների ներգրավմամբ, վերամշակման փոքր ձեռնարկության հիմնում, գյուղ. մթերքների իրացում						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Յ**

« **Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում** »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակավայրը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնել						
Ծրագրի անմիջական նպատակ	Սոցիալական խնդիրների մեղմացում, զբոսաշրջության և հանգստի կազմակերպման խթանում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		47մլն.	10մլն	--	--	--	37մլն
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Փողոցների լուսավորություն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		47մլն	10մլն	--	--	--	37մլն
	2. Համայնքը որպես ակտիվ հանգստի գոտի, զբոսաշրջիկների ներգրավում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
-		-	--	--	--	--	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համապատասխան փաստաթղթերի / նախագիծ, նաժահաշիվ/ պատրաստում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 9մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 38մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 47մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	--						
Ծրագրի հիմնական ռիսկերը	--						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակավայրը ցերեկային լուսավորության ցանցով ապահովված է մասնակի: Նպատակը՝ ցերեկային լուսավորության ընդլայնում						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 4**

« **Մարզադաշտի կառուցում** »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ակտիվ մարզական կյանքի կազմակերպում երիտասարդության մասնակցությամբ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		10մլն.	6մլն	4մլն	--	--	--
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքում սպորտի զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Առողջ ապրելակերպի խրախուսում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Համայնքի ներդրում, 1.2. նախագծի պատվիրում 1.3 Ծրագրի իրականացում						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 8մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	--						
Ծրագրի հիմնական ռիսկերը	--						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի երիտասարդություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում բացակայում է սպորտի զարգացման ենթակառուցվածքներ: Ծրագրի իրականացմամբ կունենանք ժամանակակից ֆուտբոլի դաշտ՝ սպորտ հրապարակ, որը կնպաստի առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 5**

**«Մուրբ Թաղևու» եկեղեցու հիմնանորոգում**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում հոգևոր պահանջների բավարարում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում ունենալ գործող եկեղեցի՝ հոգևոր պահանջները բարելավելու համար						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016 60մլն.	2017	2018	2019 5մլն	2020 60մլն	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հայ Առաքելական եկեղեցու պահանջների բավարարում՝ աղանդավորներից զերծ պահելու համար						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. նախագծի պատվիրում, , 1.2. հիմնադրամի ստեղծում 1.3 հանգանակության կազմակերպում 1.4 դոնոր կազմակերպությունների ներգրավում 1.5 ծրագրի իրականացում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 55մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 65մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակիչների և բարերանների ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	--						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի և շրջակա բնակավայրերի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2020թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում բացակայում է բնակիչների հոգևոր պահանջների բավարարման համար գործող եկեղեցի: Գոյություն ունեցող եկեղեցին /ժամ/ կառուցվել է 18-րդ դարում: 20-րդ դարում չի գործել և գտնվում է խիստ վթարային վիճակում: Ծրագրի իրականացմամբ եկեղեցին կդառնա գործող:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 6**

**« Հանդիսությունների սրահի հիմնանորոգում և ձևավորում »**

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Պատշաճ մակարդակով հանդիսությունների անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ժամանակակից տեսքի բերել սրահը, ստեղծել նպաստավոր պայմաններ նաև ձմռան ամիսներին հանդիսությունների անցկացմանը /ջեռուցում/						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016 20մլն.	2017 20մլն.	2018	2019	2020	2021
			-	-	-	-	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Լուծում է միայն համայնքի բնակչության սոցիալական խնդիրները						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	--	--	--	--	--
	2. Ֆինանսական մուտքեր չի ակնկալվում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	-	-	--	--	--	--	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.սրահի հիմնանորոգում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.անհրաժեշտ գույքով կահավորում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 2մլն դրամ Կապիտալ ծախսեր` 18մլն դրամ Ընդհանուր բյուջեն` 20մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	---						
Ծրագրի հիմնական ռիսկերը	--						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հանդիսությունների սրահը գտնվում է անմխիթար վիճակում, կարիք կա այն հիմնանորոգել և համապատասխան գույքով կահավորել						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 7**

**« Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում »**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Սոցիալական խնդիրների լուծում						
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակավայրի բարեկեցության բարձրացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		72մլն.	--	--	35մլն	37մլն	--
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքի ոչ ասֆալտապատ և ծայրամասային հատվածներում ունենալ ասֆալտապատ, բարեկեցիկ ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1.Ծրագրի ֆինանսավորումը իրականացնել բյուջեի ֆոնդային մասի միջոցներով և դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ 1.2.						
Ծրագրի հիմնական գործողությունները	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1.Նախագիծ-նաձահաշվի պատվիրում, համայնքի սեփական հողամասերի աճուրդ-վաճառքների կազմակերպում՝ միջոցների ներգրավման համար 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 7մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 65մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 72մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների միջոցներ /պետ. բյուջեի միջոցներ/						
Ծրագրի հիմնական ռիսկերը	--						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ և զբոսաշրջիկներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2020թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ասֆալտապատված է համայնքի գլխավոր փողոցները և մասամբ ներհամայնքային ճանապարհը: Համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավում, զբոսաշրջության խթանում						

### **3.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի գլխավոր հատակագծում իրականացվելիք հետևյալ փոփոխությունները՝

- **Համայնքի գերեզմանատան ընդլայնում**

Համայնքի գերեզմանատունը հիմնականում բարեկարգված և ցանկապատված է: Ներկա պահին նոր գերեզմանատեղերի հատկացման հմար գրեթե ազատ տարածքներ չեն մնացել: Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է գերեզմանոցի ընդլայնման հմար կատարել մոտ 2 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխություն՝ հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության:

- **Համայնքում գործարարության խթանման, բիզնես ծարգրերին աջակցության հմար նախատեսվում է իրականացնել մոտ 1.5 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն՝ գյուղատնտեսականից հասարակական կառուցապատման նպատակային նշանակության:**



## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագիրը հանդիսանում է Արգական համայնքի առաջիկա հինգ տարիների զարգացման ուղեցույցը և տեսլականը: Զարգացման ծրագրի լիարժեք իրականացումը ապահովելու է համայնքի համաչափ զարգացումը, համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացումը, նյութական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը:

Զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումը կապահովի համայնքի համաչափ զարգացումը և համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի որոշակի բարելավումը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են օգտագործել համայնքի ողջ ներուժը, ներգրավել արտաքին միջոցներ, համագործակցել հարևան համայնքների հետ:

Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական վիճակից, զարգացման տեմպերից յուրաքանչյուր հաջորդ տարիների տարեկան բյուջեների հաստատման ժամանակ հնարավոր է որոշակի փոփոխություններ և շտկումներ, որը օրենքի ուժ կստանա համայնքի ավագանու համապատասխան որոշում ընդունելուց հետո:

Համայնքի զարգացման ծրագրում փոփոխություններ կարող են կատարվել հիմք ընդունելով համայնքի բնակիչների, համայնքի ավագանու անդամներից ստացված առաջարկությունների, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությամբ: